

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք զիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լէզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐ 1878 Թ. Կ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԼՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներէն հետեւեալ օրերէն:

Լրագրի զիւրքը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵՆԵՆ ՀԵՌԵՆԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆ մէջ:

ԼՄԵՆԶԻՆ ՀԼՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատոր: Օտար քաղաքներից պէտք է զիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция «Мшакъ».

Խմբագիր—Տրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Մեր բերդերը — Ն. Երբին տեսութիւնն Նամակ Մօսկվայից: Նամակ Բագուից: Նամակ Աստրախանից: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւնն: Յունաստան: Նամակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր: «Մշակի» հեռագիրներ: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց:

ՄԵՐ ԲԵՐԴԵՐԸ

Մեզ հասաւ Թիֆլիսի նահանգական դատարանի պրօկուրօրի միջնորդութեամբ մի նամակ Մե տեխ բերդի քաղաքական բաժնի կալանաւորների կողմից, որի մէջ նրանք զիմում են մեզ խնդրելով ուղարկել նրանց մեր թերթը կարգալու համար: Ինչպէս երեւում է մի և նոյն բովանդակութեան նամակներով զանազան ազգութիւններին պատկանող կալանաւորները, թւով երկու հարիւր, զիմեցին և տեղական միւս օրական հրատարակութիւններին:

Այդ մի շատ ուրախալի երեւոյթ է, որ կալանաւորները իրանք մտածեցին իրանց սահմանափակ շրջանում մտաւոր կերակուր ընդունելու անհրաժեշտութեան մասին:

Այդ դէպքը ակամայ ծնեցնում է մարդու մէջ մտածմունքներ մեր բերդերի կազմակերպութեան վերանորոգելու հարկաւորութեան մասին:

Մարդկային հասարակութիւնը բանդարկութեամբ պատժելով յանցաւորներին, կամ ժամանակաւորապէս հեռացնելով հասարակու-

թենից մեղադրանքի տակ ընկած անձինքներին, որոնց յանցանքը դատասանի վճռով դեռ ևս տապաքցված չէ, նպատակ չը պէտք է ունենայ անբարոյականացնել փրկացնել կալանաւորութենէն, այլ ընդհակառակն պէտք է աշխատի որ կալանաւորվածը բերդի մէջ նստած ժամանակ կորած չը լինի մարդկութեան համար, իսկ եթէ հնարաւոր է, մինչև անգամ լաւանայ, ուղղվել, որպէս զի բերդից մի յայտնի ժամանակամիջոցից յետոյ ազատվելով և կրկին հասարակութեան անդամ դառնալով, պէտքական լինի հասարակութեան համար: Եւ այդ վերաբերվում է ոչ թէ միայն քաղաքական բաժնի յանցաւորներին, բայց և քրեական յանցանք գործածներին:

Գերմանական բերդերը այդ կողմից օրինակելի կարող են համարվել: Բացի գեղեցիկ շէնութենից, յարմար բնակարաններից և օրինաւոր կերակուրից բերդը ներկայացնում է ամեն տեսակ յարմարութիւններ յանցաւորներին իրանց կալանաւորութեան ժամանակ միտաւորապէս զարգանալու համար: Գանցաւորները ունեն ահագին գրադարան, նրանց համար կարգացվում են ընդհանուր կրթողական և գիտութեան զանազան ճիւղերից վերցրած գասախօսութիւնները: Բացի սորանից ամեն մի յանցաւոր պարտաւոր է վարժվել մի օր և է արհեստի մէջ, իսկ եթէ մէկը չը գիտէ ոչ մի

արհեստ, նրան սովորեցնում են մի նոր արհեստ: Այսպիսով կալանաւորվածը յայտնի միջոցից յետոյ բերդից դուրս գալով մտաւորապէս և բարոյապէս ուղղված է լինում, և բացի սորանից մի օր և է արհեստ սովորած լինելով, կարողանում է կենսել մէջ իր աշխատանքով իր համար ապուստ ճարել:

Ռուսաց լրագիրները հարգողներն որ կենարծնական կառավարութիւնը Ս. Պետերբուրգում վերջին ժամանակները կազմել է մի յանձնաժողով, որ պէտք է մշակէ մի պրօէկտ Ռուսաստանի բերդերի կազմակերպութեան վերանորոգութեան մասին: Այդ պրօէկտը, ինչպէս հարգողներն լրագիրները, շուտով ներկայացրած կը լինի պետական խորհրդի հաստատութեանը:

Յոյս ունենանք որ յանձնաժողովը իր պրօէկտը մշակելու ժամանակ աչքի առաջ կունենայ թէ Գերմանիայի և թէ միւս եւրօպական երկիրների բերդերի կազմակերպութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

26 յուլիսի

«Մշակի» մեզ հասած վերջին համարները պարունակում են իրանց մէջ այնպիսի նշանաւոր հարցեր, ցոյց են տալիս այնպիսի տխուր երեւոյթներ մեր ուսումնարանական գործի մէջ, որ այսօրվայ ուսանողը, հասարակութեան ազգային մի անդամ չէ կարող անտարբեր մնալ և չը յայտնել իր հայեալը այդ հարցերի վերաբերութեամբ: Վիշ չենք լսում զանգաւորներ ամեն կողմից, թէ այժման նոր սերունդը, լուսաւորված երիտասարդութիւնը ոտն է վերաբերվում դէպի ազգի զարգացման, լուսաւորութեան գործը, չէ գանկաւորում ուղղորդութիւնը դարձնել ուսումնարանի վրա, որ անշուշտ այն հաստատութիւններից մէկն է և գլխաւորը, որից կախված է ազգի առաջադիմութեան և բազմաւորութեան խնդիրը: Թէ հասարակութիւնը և թէ նրա շահերի և պահանջների ներկայացուցիչ մասնաւոր անկալած իրաւունք ունի պահանջելու, որ նոր, զարգացած սերունդը, նուիրելով իր գործունէութիւնը ուսումնարանական հարցին, աշխատէ մի նոր, մանկավարժական պահանջներին համապատասխան կազմակերպութիւն տալ մեր ուսումնարաններին, աշխատէ ոչնչացնել այն ճիւղ, փոխած սխալները, որ գծաւորաբար շատ խոր արմատներ է գցել մեր կեանքի մէջ: Բայց միւս կողմից մենք տեսնում ենք որ նոր սերունդը ունի նոյնպէս կատարելա իրաւունք պահանջելու հասարակութենից, որ սա ամեն կերպ աշխատէ չըբարբաւել նրա գործունէութիւնը ուսումնարանական գործի վերաբերութեամբ այն-

պիսի հանգամանքներով, որ նրա աշխատանքը, նրա թափած քրտինքը ապարդիւն չը լինեն, որ նրա լուսաւոր նպատակները կարողանան իրագործվել, նրա գործունէութիւնը կարողանայ բերել ցանկալի արտօններ: Այո, իրաւունք ունի նոր սերունդը այդ պահանջներն անելու: Վերջին երեւոյթները մեր ուսումնարանական գործի մէջ պարզ ցոյց են տալիս, որ նա իրաւունք ունի Այդ երեւոյթները շատ գեղեցիկախօս են: Լուսաւորված երիտասարդը, մի կողմը թողնելով իր անձնական շահերը ջերմ ցանկութեամբ օգուտ բերելու իր ազգին, նուիրում է իր գործունէութիւնը ուսումնարանին. նա ընդունում է տեսչի պաշտօն և մեծ եռանդով սկսում է ձեռք տալ իր գործին: Նա բարեկարգում է ազգայնաց ուսումնարանը, հրաւիրում է արժանաւոր ուսուցիչներ, բացում է օրիորդաց ուսումնարան, համարեա իր և ուսուցչական խմբի ծախքով թատրոն է կառուցանում: Բայց նրա դէմ դուրս է գալիս լայն ֆարաշի մէջ կօլոված մի հոգեւորական, որ զրգոված լինելով չնչին անձնական անբաւականութիւններից, ոտքի տակ տալով ամեն մի ազնիւ, բարոյական զգացմունք, սկսում է ինտրիգաներ լարել նոր տեսչի դէմ. իր կրքերով կուրացած, նա մոռանում է մինչև անգամ իր բարձր կօչումը և ջերմեռանդութեամբ սկսում է փոս քանդել իրան առելի, բայց ժողովրդին սիրելի անձի համար: Նա համոզմ է իր նպատակին, որովհետեւ նա—ոյժ է, ունի նշանակութիւն, ունի ազդեցութիւն: Իսկ խեղճ երիտասարդը, որ ազնիւ զգացմունքներով լիքը ցանկանում էր ծառայել իր ազգին, ստիպված է յաղթված յետ քաշվել, համազօրվել որ անկարելի է գործել, քանի որ կոպիտ ետակաւորութիւնը պատրաստ է դուրս գալիս ազնիւ ազգագոյտ ձգտումների դէմ: և յաղթող է հանդիսանում:...

Ահա ինչպէս է գնահատվում նոր երիտասարդի աշխատանքը:...

Մենք այժմ ուսանողներ ենք: Գուցէ չառերը մեզանից ջերմ ցանկութիւն ունեն նուիրելու իրանց ազգայն գործունէութիւնը ուսումնարանին: Ինչպէս սիրտ անեն նրանք այդ քայլը անելու, քանի որ տեսնում են այժմ, որ մի խռովածը վարդապետ կարող է տալիս ու վրա անել բոլոր ուսումնարանը, իրար գլխով տալ հողաբարձութիւնը և ուսուցչական խումբը, կարող է համարձակութիւն ունենալ գոհելու ուսումնարանը և նրա հետ կից հազարաւոր մանուկների ապագան իր կողմը, վայրենի կրքերին: Ինչ որտեղ նրանք կարող են աշխատութիւն թափել ուսումնարանի վրա, քանի որ ամեն մի քաղաքում նրանց յիշածը հեշտութեամբ կարող է քառ ու քանդ անել մի տարաբնույթ ոյժ: Սրանից պարզ երևում է թէ քամին ինչ տեղից է փչում: Այդ առաջնորդարանն է, ինչտեղ մի օր և է հայր սուրբ, իմպիոյ բազմաթիւ վրա բազմած կամ երբեմն Արկիւլ-Հէմիլի պէս իր թանկագին կենսաւրը վաճառելով մէջ «երկակայելով» պահապաններով չըջապատած, կարող է ոչնչացնել ուսումնարան և ամեն մի բան, որ ապառնում է իր հանգստութեանը: Մենք հենց գտնում ենք, թէ մեր հոգեւորականները առաջ չեն գնում: Բայց սա առաջադիմութիւն չէ ինչ է: Ոչ որ Հռօմի անսխալականները վատթիւնում պահում են մի մշտական գլխաւոր: Այժմ մեզ մօտ թող մշտական չը լինի երեքեմական լինի: Եւ այն էլ ցոյց է տալիս որ մեր հոգեւորականները առաջ են վազում: Բայց չը պէտք է թողած որ նրանք շատ վազեն: Կարկաւոր է այդ տեսակ լուսաւորութեան հոսանքի առաջը առնել: Մեր հասարակութիւնը եթէ ցանկանում է, որ իր ուսումնարանները բարեկարգ դրութեան մէջ լինեն և հասկացող տեսչի գործունէութիւնը ապարդիւն չը լինի, պարտական է ամեն կերպ աշխատել ունենալ նոյնպէս հասկացող թեմական առաջնորդներ: Շատ պարզ է, թէ որքան մեծ է այն վերջինների նշանակութիւնը ուսումնարանի համար: Բաւական է միայն տեսնել, որ մեր ժողովրդի առաջ հոգեւորականի խօսքը չառ բարձր նշանակութիւն ունի: Եւ այն ինչ վարդ է

Ալէէքէից յուլիսի 20-ին «Independence Belge» լրագրին գրված մի նամակից քաղում ենք հետևեալը։ Յունաստանի հարցի վերաբերութեամբ Բերլինի կոնգրէսում արված վճիռը ոչ որքին չը բաւականացրեց։ Առաջին անգամ որ լուր ստացվեցաւ թէ Նպիւրոսի և Թէսալիայի մի մասը պէտք է արվի Յունաստանին, պաշտօնական մամուլը սկսեց յալ-թուլթիւն բռնաւելլ կարծելով որ իր ցանկութիւնները կատարվեցան։ Բայց երբ առաջին օգեկորութիւնը անցաւ և կարողացան աւելի հանգարտ մտքով իմանալ թէ կոնգրէսի տվալ վճիռը ինչ արժէք ունէ, ամենաջիւրմ օպորտիւնիստներն անգամ սկսեցին վրդովվել տեսնելով որ խարվել են։ Կրիտը, այդ հերոսական կղզին որ յիսուն տարի է ոչինչ զոհաբերութիւն չէ խնայել իր անկախութիւնը ստանալու համար, խաբէութեան զոհ եղաւ։ Թէպէտ իրան խոստանում են աւելի լաւ կառավարութիւն, հիմնված 1868-ի օրգանական կանօնադրութեան վրա, բայց նրան թողնում են իր նախկին տէրերի, թիւրքաց տիրապետութեան ներքեւ։ Յայտնի է թէ այդ օրգանական կանօնադրութիւնը որը 10 տարի է որ գործադրվում է, ինչ արժէք ունէ և մինչև որ աստիճան ապահովում է քրիստոնէական իրաւունքները։ Կրիտ կղզու ապստամբութիւնը հետևանքն է այդ կանօնադրութեան որ կոնգրէսի վճռի համեմատ պէտք է լաւացնէ բազմաթիւ քրիստոնէական երանկներին գրութիւնը։ Ամեն մարդ յոյս ունէր որ աւելի լաւ բան պիտի լինէր կոնգրէսում։ Յունաստանի կառավարական շրջաններում ոչ ոք չէր տարակուսում թէ Կրիտը չի միանայ Յունաստանի հետ։ Այնպիսի հաստատ ապահովութիւններ էին տրվել որոնց վրա տարակուսել ներելի չէր։ Կիսապաշտօնական լրագիրները հրատարակել էին թէ կոնգրէսի Կրիտ կղզուն տալու ամենափոքր իրաւունքը այն կը լինի որ այդ կղզին հարկատու իշխանութիւն կը լինի Յունաստանի գերիշխանութեան ներքեւ։ Երբ յայտնվեցաւ որ կոնգրէսի մէջ մի ձայն անգամ չէ բարձրացել Յունաստանի արդար դատը պաշտպանելու համար, այդ ժամանակ իմացան որ կատարելապէս խարվել են։ Առ այժմ ապստամբութիւնը շարունակվում է կղզու մեծ մասում։ Թէպէտ թիւրքերը աւելի բազմաթիւ են և աւելի լաւ զինուորով, բայց պաշարված ֆինացել են իրանց ամրոցներում և չեն կարողանում դուրս գալ։ Հաւանական է որ կրիտացիները իրանց դատի պաշտպանվելուց յուսահատված, զենդուրթիւն անեն անգլիական զործակառարկների խոստումներին և զինաթափ լինեն։ Բայց չը կարծէք որ խաղաղութիւնը կրկարատե լինի։ Երբ առաջին յարմար տոյթը պատահի, նորից ապստամբութիւն կը ծագի։ Քանի որ հարստահարողներ և հարստահարվածներ կան, չը պէտք է յուսալ որ Թիւրքիայում բնակվող երկու ազգեր կարողանան համաձայնութեամբ ապրել։ Թիւրքերը քանի որ իրանց տէր են համարում, կրքեք կարելի չէ նրանց հակադնել թէ քրիստոնէական ել իրանց հաւատար են և քրիստոնէական կիանքը, պատիւը և ստացուածը իրանց հաճոյքից

կախած չեն: Այն բարեկարգութիւնները որոնց սուլթանը ստիպւած խոստանում է անկէ չեն կարող փոփոխել իրերի այդ դրութիւնը և հաւատարմութիւնը: Եւ թէ քրիստոնեաներին: Նպիրտի և Թէսալոյի համար, կոնգրէսը կարծել է որ ամեն բան կատարած է լինում հրաւիրելով թուրքիային որ ուղղակի Աթէնքի կարիքներ հետ համաձայնել իրանց հրաւիրային սահմանները դրսեւոր համար: Գրեթէ վճռական կերպով որոշեց անգամ, Փրանսիական հաւատարմասար պ. Վաղրէլիդօնի շնորհիւ այն տեղերը որոնք այսուհետեւ երկու տարածքներին պէտք է սահմանադրուի լինեն: Բայց Յունաստանի այդչափ մեծանալը չի բաւականացի երկրի ամենաշափաւոր ցանկութիւնները անգամ: Նրան տալիս են Նպիրտի և Թէսալոյի մէկ մասը միայն որ 400,000-ից աւելի բնակիչ չունի, որոնց երեք չորրորդ մասը քրիստոնեայ է, մնացածը թուրք որոնց հետ են նաեւ մի քանի հազար հրէաներ: Բայց հարցը դրանում չէ. այլ թէ Յունաստանը ինչպէս կը կարողանայ իրագործել կոնգրէսի ցանկութիւնը: Զմարտ է թէ կոնգրէսը խոստացել է տէրութիւնների միջամտութիւնը եթէ դժուարութիւններ ծագեն: Բայց այդ միջամտութիւնը ինչ հետեւանքի կը հասնի, մինչև որ աստիճան կը յուսալանայ: Հաւանական է թէ Թուրքիան ցոյց տալով որ ուզում է համաձայնել կոնգրէսի ցանկութիւններին, այնպիսի պայմաններ առաջարկէ սահմանները դրսեւոր համար որ անհնար կամ երեւակայական լինի որ և իցէ համաձայնութիւն: Այդ ժամանակ ինչ պէտք է անէ Յունաստան, ինչ պէտք է անեն Բերլինի գաշտագրին ստորագրող տէրութիւնները:

«Եթէ այդ տէրութիւնները, իրար չը գրգռելու և իրանց սեփական շահերը չը վրտանցելու համար, բռնի միջոցներով չը պարտաւորայեն Թուրքիային իրանց վճիռը գործադրելու, Յունաստանը պէտք է իր սեփական միջոցներով պաշտպանէ իր պահանջները: Այդ ժամանակ Յունաստանին մնում է կամ զենքը ձեռքին պահանջել կոնգրէսի որոշած իրաւունքները իր համար, կամ թողնել այդ երեւակայական իրաւունքները, որոնք երեւի թէ եւրոպան տվաւ նրան, իր հետ խաղ անելու համար: Տեսնենք թէ ինչ կանէ Յունաստանի կառավարութիւնը Պաշտօնական լրագիրները արդարեւում են թէ դաւաճանեցին իրանց: Անգլիան որին մինչև ամպերը բարձրացնում էին քիչ ժամանակ առաջ, ասում են այժմ թէ Յունացի դերը կատարեց, խաբեց, մասնեց Յունաստանին: Անգլիան յետ կանչել տվեց Յունաստանը իր զորքերին, նենգաւոր խոստումներով վերջացնել տվեց Նպիրտի և Թէսալոյի ապստամբութիւնը և երբ րոպէն հասաւ որ ապացուցէ մեր վրա ունեցած իր համակրութիւնները որոնք մեծ համբաւներով ծանուցել էր աշխարհին, շուտ տվեց երեսը, հակառակվեցաւ Յունաստանի համար լինելու որ և իցէ վերջութեան, դատաւարանից Կրիտ կղզուն որ մնայ իր հարստահարողների լծի տակ, իր անմիջական պաշտպանութեան տակ ընդունեց Թուրքիային և իր ծառայութիւնների փոխարէն ընդունեց Կրիտ կղզին, որ իր համար ապահովացնում է Հնդկաստանի ծանապարհը: Կա մի վաճառական տէրութիւն է, գրում են, որ զոհեց Յունաստանը իր ապահովութեանը: Նրանք զորքում են Նպիրտին, Թէսալոյին և Մակեդոնիային որ նորից ապստամբվին: Այժմ հրահանգ տրված է Յունացի զենապետին Կ. Պոլսում որ բանակցութիւններ սկսի Բ. Գրան հետ, զորքը բարեկամութեամբ վերջացնելու համար: Յոյս ունենք որ Թուրքիան համազօր թէ վերջապէս կը պարտաւորվի զինակ Յունաստանի արդար պահանջներին»

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Էրզրում, 25 յուլիս:

Յիւրկունս գոյով լեռան ահագին և նա ծնաւ մուկն չնչին—ա՜հ չնչին մուկը— այն թշուառ հեռանքները, որոնց հասաւ կոնգրէսը իր ամսական ծանր և մեծախոն նիւստերից յետ: Տեսնելով այն հակառակ և չը կամեցող վիճքը, որ ունեցել է հայոց բազմի վերաբերմամբ Անգլիայի առաջ պաշտօնեան, ակամայ անցնում է մարդու գլխով միայն թէ Բերլինի վեպի մեզ թշուառական յարաբերութեան չարժաւորութիւնը մէկը չէ եղել արդեօք նախանձը, որ զգացել է իւրաքանչեպի կոնգրէսի սրտում, երբ երկու հազար բնակ ազգերից միւրը հայերը արտայայտել են ազգայնութեան և քաղաքական կեանքի նշաններ և կարողութիւն, մինչդեռ միւսը նրանցից իր միտքին մշտնջական ազդէ մնացել է թաւառական, հայրենագործի, ապրողի, ամեն ազգերի անգամ և բոլոր աշխարհին խորթ... ձըշմարտ, մարդու միտքը արամադրված է գնալ ամեն տեսակ օտարոտի բաների, պատահելով մի այդչափ դուր զմայլաւորութեան: Երբ տաճկահայերի լրագիրները հասցրին այստեղ Բրիտանիայի լրագրի խօսքերը, ուղղած հայոց ազգի դէմ, որին նա կոչել է թուրքախոս և կոչնարար, այնպէս մի կատարել վայրայթ և ատելութիւն բորբոքեց բոլորի սրտում, որ թէ զըտնվէր այստեղ չարախօս իւրաքանչեպին, նա չարախօս սխալված կը տեսնէր իրան թէկուզ պաշտպանված Ալեքիսի գունդերով... Զարմանալի է իրակ և ցաւալի լսել մի այդպիսի նըշանաւոր եւրոպական մարդոց այդչափ տգիտութիւն կամ թէ գիտակցական արհամարհանք և վէճք մի ամբողջ ազգի պատէին և արժանաւորութեան: Բնական է այժմ որ որչափ զուարթ են զգում հայերը զէպի Անգլիան, այնչափ ևս համակրութիւն զէպի Ռուսաստան: Ռուսաստանը տուաւ Հայաստանին 16-որդ յօդուածը, իսկ Անգլիան ջանք արեց կոնգրէսում նուազանչեւ և չնչին այդ յօդուածի գործութիւնը առաջարկելով չը խոսել բացառապէս Հայաստանի վրա, այլ Անատոլիայի բնիկները քրիստոնեաներից ևս բոլորովին արտաքսել գաշտագրից «Հայաստան» անունը: Այսպէս թէ այնպէս, բայց իրողութիւնը այն է, որ հարուածը ստացան նրանք, ով պիտի այսուհետեւ ազգեցութիւն ունենայ հայերի վրեժակի վրա, տօրեակի հայերի բազմը, մեծահոգութիւն ցոյց տայ նրանց և ունենայ իրանից հայերի ակնկալութիւնը, հետեւապէս չը դադարէ գործարդել իր խաղաղ և սուղ գաղտնի քաղաքականութիւնը և սղոցել հայոց ազգի սինը—նրա կրօնը, կապը, միտքները, եռանդը, նիւթական և բարոյական դրութիւնը: Վասն որոյ աչքի առաջ ունենալով մեր դրութեան այս կորուստերը պայմանները, պէտք է և մենք որոնենք ընդդիմադրութեան միջոցներ, գտնենք մեզ պաշտպանելու հնարք: Միտքարտական է որ ինքնապաշտպանութեան միջոցներ մենք ունենք, միայն հարկաւոր է կարողանալ նրանից շահվել. բարեխաղ պայմանները սրանք են. 1. Անգլիայի և Ռուսաստանի շահերի և քաղաքականութեան փոխադարձ հակառակութիւնը. 2. եւրոպական միւս տէրութիւնների ձգտումները՝ ունենալու արեւելքում իրանց համարումը և ազգեցութիւնը 3. Հայաստանում կատարելի վերանորոգութիւնները եւրոպական ընդհանուր հակողութեան ենթարկվելը, ուրիշ խօսքով Հայաստանի ստացած կարեւորութիւնը միջազգային շահերի մէջ: 4. հայոց ազգի անընկճելի տոկունութիւնը և հաստատաւորութիւնը: Ասան այն պայմանները, որոնցով հայերը կարող են անցնել բոլոր խոշորագոյններից և հասնել իրանց վերջնական նպատակին, եթէ զինքն այդ նպատակին միտքորոշվեամբ, համաձայն, խոհեմ և հաստատ քաղաքականութեամբ: Այստեղի հայերը արթնանալով կոնգրէսից ստացած հարուածի թմրութեանց, արդէն սկսել են խորհել իրաւաբանութիւնը կարելի է լսել այս տեսակ դատողութիւններ: «Անգլիայի թեղադրութեամբ և սուլթանի հրամանով անհրաժեշտ պէտք է չուտով գծագրվեն և արվեն մեզ թէֆորմներ. անցնալ փորձերը ապացուցել են որ սուլթանի կառավարութիւնից չը կոչ ոչինչ փրկարար սպասելիք, Անգլիայի մեծահոգութիւնը նույնպէս արդէն ցոյց տուցի իրան փառ կողմից, բայց պայմանները այժմ խորովել են: Զաւակաստանը ջարդ ու փշուր եղաւ իր զանցառութեան համար զէպի քրիստոնեաների վրեժակը, Անգլիան զինաւորեց և վրդովեց իրա զէմ իր նենգ և խաբուսիկ քաղաքականութեամբ պետութիւններին և բոլոր

լուսաւոր աշխարհը, Հայաստանի հարցը կը լինի այժմ այն բաղաւոր առիթը և միջոցը, որից Անգլիան և Թուրքիան միասնեալ եռանդով կաշխատեն օգուտ քաղել իրանց բարոյական նշանակութիւնը վերականգնելու համար: Եւրոպայում և երեսպարզ դուրս գալու հասարակաց կարծիքի և դատաստանի առաջ: Բայց այս ամենը մեզ չը պէտք է խաբէ և յուսադրէ, այլ ուղղակի կամ թէ եւրոպական մամուլի միջոցով, որը մեզ ճանաչել է արդէն և համակրում է, մենք պարտաւոր ենք բոլոր մեր ստացածը, չը ստացածը, կարեւոր ու պահանջը հայցնել անպաղաղ մեծ պետութիւնների ներկայացուցիչների տեղեկութիւններին: Եւրոպական մամուլը ամեն զէպեւում պէտք է լինի միշտ մեր բերանը և լեզուն, վասն որոյ ոչինչ գործադրելի միջոցներ չը պէտք է ուղարկենք ինչպէս յայտնի օրգանների աչքը զոնէ կիտով մեզ վրա պահելու: Չենք արդեօք այսպիսի դատաւորութիւնները միտքարական նշանաւոր ինքնաճանաչողութեան և արթնութեան: Տայ Աստուած որ այս ինքնաճանաչողութիւնը, որից օր աւելի զարգանայ, կապկալով բոլոր հայերին մէկ սրտով ու մէկ զգայունքով առանց դատակարգի ու դատաւորութեան խտրութեան... Երեւի ոչ առանց հաստատ նպատակի, այստեղի հայերը, օգուտ քաղելով «ԴՈԼՈՅ» ի համակրական յարաբերութեանց զէպի հայերը, ուղարկել են նրա խմբագրին մի ազգու հանրագիր, որի մէջ յայտնել են և իրանց ջերմ զգացմունքը և երախտագրութիւնը զէպի ռուսաց պետութիւնը և ազգը: Ահա մօտաւորապէս նրա բովանդակութիւնը. «Հայկական ազգի մի փոքրիկ դասը որ ներկայացնում ենք էրզրումից, մատուցանում է իր խորին չնորձալալութեան զըգացմունքը «ԴՈԼՈՅ» լրագրին, որը այդչափ եռանդով պաշտպան է հանդիսանում ճշմարտութեան և մարդասիրութեան գործին և որը այդչափ զգայուն է մեր զարեւոյ կրող տառապանքներին կիսալուսնի լծի տակ: Բազմապաշար ազգը, ուղղելով արտասուալից հայեացքը զէպի Ալաաթի—Ալեքանդ, սփռում է իր անհուն երախտագրութիւնը նորա օտի տակ, որի հզօր կամքով փշրվում են ստրկութեան կապեր, որով կաշխատեցնում են Բրիտանիայի վարդապետութեան հեղաբարոյ հետեւողները: Գե՜հ թող վարձատրէ նախախնամութիւնը, բերդապատիկ առաւել թաղակիր Պաշտպանին չարաբաղդ քրիստոնեաների և թնոյ ապրի նրա զիւցազնական ժողովուրդը—մեծահոգութեան և բարութեան պատկերը: Լավում է որ կանանց կողմից պատրաստվում է առանձին հանրագրութիւն, որը պէտք է լինի աւելի փառաւոր ստորագրողների թվով: Նրանց մէջ պէտք է լինեն և բողբոջական, կաթոլիկ ու յոյն կանայք և օրիորդներ, որոնք սերտ կապված են այժմ հայաւթրական օգուտ: Թող օրհնվի բոլորի միտքիւն յանուն հայութեան...»

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բուրգասից լրագիրներին հեռագրում են, որ թուրքերը յուլիսի 24-ին դատարկեցին Շուվա բերդը, պաշտպան զեռա զառանգում են դուրս երեւել արտերազմական պաշարներ: Այդ բերդը գրաւեց ռուսաց հետեակ առաջին զօրաւորները: —«ԴՈԼՈՅ» լրագրի սեփական թղթակիցը հեռագրում է, որ գենեռալ Սոլովյովին պահանջներին համեմատ թուրքերը խոստացան դատարկել Վարնա բերդը մինչև օգոստոսի 5-ը: Պրաւադի կայարանը, որ գտնվում է Վարնայի մօտ, ռուսաց զօրքերը արդէն գրաւեցին: Թուրքերը բողբոջում են: —«Times» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, որ Ֆրանսիայի զենայան պ. Ֆրանկէ հրաժարական տեսութեան ժամանակ առաջ սուլթանին, որ Բ. Գրան անհամաձայնութիւնը ենթարկվել կոնգրէսի վճիռներին: Յունաստանի վերաբերութեամբ իր հետեւանքի միջամտութիւնը, որի վերաբերութեամբ Ֆրանսիան չէ կարող ստանալ պիտ մնալ: —Բուխարէստից լրագիրներին հաղորդում են, որ Բուխարէստից դուրս են գնում ռուսաց զօրքերը և ուղեւորվում են իրանց հայրենիքը: —Աղբիւսից լրագրին «Polit. Corresp.» լրագրին հաղորդում են, որ անտեղ մահ է հաստատարուել ինչ բոլորապայաններին, որոնք մասնակցում էին թուրք բնաւորների կողմագնացում և սպանմանը: —«Weser-Zeitg.» լրագրին հաղորդում են որ հայոց կաթիկոսները, որոնք Կ. Պոլսի հայոց պատրիարքի և հայ ժողովրդի յանձնարարու-

թեամբ պաշտպան էին հանդիսացել կոնգրէսում թուրքաց հայերի պահանջների, բողբոջ են ներկայացրել կոնգրէսի վճիռների զէմ հայոց խնդրի վերաբերութեամբ: Ասում են որ լորդ Բիկլօնֆիլդը կոնգրէսի բոլոր լիազօրներից ամենից աւելի էր ընդդիմանում թուրքաց հայերի պահանջների բաւականութեան տալուն: Լրագիրը ասում է որ այնու ամենայնիւ հայերը պէտք է զոհ լինեն կոնգրէսի հետեւանքներով: Եթէ խորհեան և Նարեկ կաթիկոսները եկած չը լինէին Եւրոպա և յուզած չը լինէին խնդիրը, կարելի է հաստատ ասել, որ Սան-Ստէֆանօի դաշնագրի 16-որդ յօդուածը այժմ բողբոջվին ջնջված կը լինէր Բերլինի կոնգրէսի դաշնագրից: —«ԴՈԼՈՅ» լրագրին Էրզրումից հեռագրում են յուլիսի 21-ին հետեւեալը: «Անկարից է խօսքերով նկարագրել այստեղի հայերի մէջ տիրապետող զրգուշակ գրութիւնը: Աչքի առաջ ունեւով իրանց բարեբար—անգլիացիների ազգեցութեան տակ չուտով ընկնելու փառսը և գիտեալով որ թուրքերը նորից կը ստրկացնեն իրանց, որ Մեծ-Բրիտանիայի ներկայ դաշնակիցները քաղաքներ և շէրէտներ ապաղապստ գազա: նութիւններ և կամայականութեան մէջ աւելի սանձարձակ կը լինեն փոքր-Ասիայում,—այդ բոլորը այն աստիճան վրդովեց հայերին, որ ամեն րօպէ մեծանում է մտքերի յուզումն և հայերի զգոյնութիւնը օտանման չունի, Կարճեւով աղերսելով իրանց հայեացքները ռուսաց արժիւն, նրանք ամեն բանի պատրաստ են և խաղաղութեան չեն հաւատում: Ռուսաց մամուլը, ներկայ, հայերի համար ծանր ժամանակում հանդիսանում է միակ միտքարկը և հայերի զգացմունքների ու ցանկութիւնների արտայայտիչ: Այստեղ հայերի մէջ ձեռքից ձեռք է անցնում մէկ աղբիւս, որ այս օրերս կուղարկվի ձեռք: Նրան ստորագրում են քաղաքում և գիւղերում առանց բացատրութեան հայոց ազգաբնակչութեան ամեն զատակարգերը: Ահա այս աղբիւսի իսկական թարգմանութիւնը: «Հայոց բազմապաշար ժողովրդի օսկաւամանութիւնը, մեր, Էրզրումի հայերի քերանով մատուցանում է ձեռք իր անտանձան չնորհակալութեան զգացմունքի արտայայտութիւնը այն ճշմարտութեան և պաշտպանութեան խօսքերի համար, որոնց դուք արտայայտում էք ձեր լրագրի էջերի մէջ, որը այնպէս ներազգաց է մեր ազգի օտոմանեան կիսալուսնի լծի տակ կրած չարաբարքների ձայնին: Կարեւոր հաւանված ժողովուրդը թափում է երախտագրութեան արտասուքներ Ալաաթի—Թաղաւորի առաջ, որ Բրիտանիայի վարդապետութեան խաղաղ հետեւողների վրա բարբարոսութեամբ դրած ստրկութեան շղթաները իր հզօր կամքով քանդեց: Թնոյ Նախախնամութիւնը հարկաւորապէս վարձատրէ Թուրքիայի թշուառ քրիստոնեաների թաղակիր Պաշտպանին և թնոյ ապրի նրա հերոս ժողովուրդը, որ ներկայացնում է բարութեան և վսեմութեան օրինակ»

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10-ի-09, 1/13 օգոստոսի: Ռուսաց Կայսրից հեռագիր ստանալով և հետեւելով գերմանական հաւատարմասարի խորհրդներին սուլթանը վճռեց հրամայել մաքրել Բաթում բերդը: Բ. Կուռը հեռագրեց Հաֆիզ-պաշային ամեն ջանք գործ գնել Բօսնիային խաղաղացնելու համար: Վիեննա, 31 յուլիսի (12 օգոստոսի) «Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է որ ռուսաց զենայան Թուրքիայում Լօբնով-Բօսնովսկի յայտնեց Բ. Կրան թէ ռուսաց զօրքերը վերջնականապէս յետ կը քաշվեն Կ. Պոլսի մօտից միայն այն ժամանակ, երբ Բ. Կուռը կատարեալպէս կը կատարէ Բերլինի դաշնագրի վճիռները և յունաց խնդրի վերաբերութեամբ որոշումները: Կօրբուջան կը ստանայ մի առանձին կազմակերպութիւն Յովհան Գիկայի կառավարութեամբ: Լիվնօի մէջ մահմետականները ապստամբեցան: Թուրքաց զօրքի գլխաւորը սպանվեցաւ: Զօրքերը միացան ապստամբների հետ և բանադրեցին շատ քրիստոնեաներ:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ինձ յանձնված լինելով ԵԳՈՒ-
ԼԻՍԻ ԵՐԿԱՆՈՒ ԴՊՐՈՅ-
ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՃԵ-
ՊԵՏՆԵՐ վարձել ինքնուրու
ցանկացողներին պայմաններին մա-
սին խօսելու գիմել «ՄՇԱԿԻ»
խմբագրատանը. իսկ օտարաբանա-
քայլը կարող են իրանց ցանկու-
թիւնը յայտնել նամակով: Ըն-
կարմար Համարվածներին չե պա-
տասխանվի:

Յ. Մէլքե-Յակոբեանց

Օգոստոսի կէսից լայն կը տեսնեն Ս. ՄԱՆ-
ԴԻՆԵԱՆԻ հետեւեալ նոր աշխատասիրութիւն-
ները

- 1) Ընթերցարան հայերէն լեզուի «ՆԱՀԱՊԵ-
ՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ» երրորդ տարվայ
ՈՒՍՄՈՒՆԵՐ ԵՒ ԸՆԹԵՑՄՈՒՆԵՐ» անունով:
 - 2) «ՀԱՄԱՌՈՏ ՄԱՆԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ»:
- Յանկացողները ստանալ լիակազմ գրքերը իր
ժամանակին կարող են դիմել «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱՎԱՅԱՐԱՆՈՅԸ» կամ Զաք. Կրիզոստոմի
գրաքանդակոցը:

2—3

ՍԱՆՎԱՐԻ Է ԳՕՏՈՎԱԼՆԻԱ 40% զեջուան
կը լինի խանութներն զինք: Կօջորակայեա
փողոց, տուն № 13, Տէր-Բարսեղեանց:

Պերձ Պրոշեանցը յայտնում է իր պիտոն-
նախնային վերաբերման յարգող բաժանորդ-
ներին, որ գիրքը դուրս կը գալ մինչև օգոս-
տոսի վերջը և այն ժամանակը ամեն ոք կը
ստանայ իր համարը:

«ՀՈՐՏՈՒԹԵԱՆ ԻՐԱՆՈՒՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ»
Գուստաֆ Բալանթարեանցին, ուսուցիչ լի-
զուով, ծախվում է Բերնշտամի գրաքան-
դակոցում, Թիֆլիսում, Գոթլիբի պրոս-
պեկի վրա: Գինն է 75 կոպ. փոստի ծախ-
սով 80 կոպէկ:

1—6

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՅԱՐԱՆՈՅՈՒՄ ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՅԻ
ՎԱՅԱՐՎՈՒՄ ԵՆ

1. ԵՏՏՈՒՆԵՎՍԿԻ.—Ժողովածու թուրքական լեզուի յարմարեցրած հայ ուսում-
նարանների համար I մասն—ամբողջ թւեր, 3-դ տպագրութիւն Հիմնական փոփոխութիւն-
ներով և յաւելումներով. փոխադրութիւն Մարտ. Սիմեոնեանց: 1878 թ. զինն է
հատուկ անոցների համար 50 կ. դամարով—45 կ.:
2. ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒԻ առաջին տարի—գրել և կարգաւ աշխատասիրութիւն
Վ. Աղայեանցի, զինն է 15 կ.:
3. ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒԻ ծնողաց և ուսուցիչների համար—Վաղար. Աղայեանցի,
զինն է 20 կ.:

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆ-
ԳԼԻՍԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են ՍՊԵՏԱԿ
ԲՈՒՄԱՅԵՑԱ զինուորականների շորերի համար
արդիւն 1 ր. և բարձր, ՈՒՆԵՍԻ շորերի հա-
մար և ՊԱՐՈՒՍԻՆ արդիւն 50 4., ՓՕՇԻՆԵՐ
տարափոխիկ հիւանդութիւնների զէմ և ԽԻՆԱՅԻ
ԲԱԼԶԱՄԵՆ (իւղ) 1 1/2 ր., ՍԱՊՈՆ 10 4. և
բարձր, ՅԻՏՐԱՊԻ մաշկեղէն 1 1/2 ր., ԲԻՍԱԿԻՏ-
ՆԵՐ 1 ր., և բարձր, ՖԵԼՏՐԵՆԵՐ 4-40 ր., եր-
կաթեայ մահալաններ 5 ր. և բարձր, սոցներ
50 4. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆՆԵՐ զիւրիւն
3 ր., ԳՐԻՉՆԵՐ արգը 15 4. և բարձր, ԲԵՎՈԼ-
ՎԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 ասեղ 80 կոպէկ,
արական թԱՄԵՐ 40 ր. և բարձր, ԻՊԱԿԱՆ-
ՆԵՐ 70 ր. և բարձր, ծածկոցներ, մալեանոցներ,
երկանների շորեր 4 ր. և բարձր, հիւանդի վե-
րաբուժներ 12 ր. և աւելի, վերականգնող ՄԱԿ-
ՄԱՍՏԵՐ 2 ր., կողպէքներ և պոզնոսներ 10 4.
և բարձր, բամբակեայ, պորտ-վէյն, խեղու և
անգլիական օղի 1 1/2 ր., ՊԱՆԻՐ չեստեր 60 4.
և բարձր, Շուտով կը լինի լաւ թէյ 1 ր. ֆունտը:

19—20

Առանձնապէս ՊԱՐԱՊՈՒՄ ԵՄ աշակերտներ
պատրաստելով բոլոր ԶԻՆՈՒՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ-
ՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ: Պատրաստում են եր-
րորի կարգի կամուր ժողովների:

Նախընտանայ փողոց վեցիկի դարձարանին
կից, ՏՈՒՆ ԳՈՒՄԵԼԵՎՍԿԻՆ, № 1.

1—5

ՄՈՁԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԵՐԿԱՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱ-
ՐԱՆՆԵՐՈՒՄ հարկաւոր են մի ՈՒՍՈՒՄՆ 2 հա-
յոց լեզուի և մի ՎԱՐՃՈՒՆԻ: Նոյն տեղի
ՔԱՎԱՔԱՅԻՆ երկուսն ուսումնարանների հա-
մար հարկաւոր է մի ուսուցիչ: ՀԱՅՈՑ ԼԵ-
ՁՈՒԻ տարեկան 600 րուրդ ուսուցիչի շարա-
թական 17 դաս: Յանկացողները կարող են
մանրամաս պայմանները իմանալ «ԿԵՆՏՐՈ-
ՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՅԱՐԱՆՈՅՈՒՄ» ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԳԱԼԵՐԵՈՒՄ:

Կարբիէլ քաջանայ Տուրքայեան

1—4

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՈՒՄ

ՀԱՏ ԷՃԵՆ ԳՆԵՐՈՎ, ՎԱՐՉՈՎ, ԵՆ ՏՐՎՈՒՄ

ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

ՔԱՐԱՆՈՒԻ „ՌՈՒՍԱՍԱՆ“ ՀԱՄՏԻՑ

(ՀԱՆԵՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՄԵՐԱՆ

ԳԻՒՂՍԻՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԷՆԻՆԻ

Փախում է ՀԷՆԻՆԻՆԻ ՊԱՎԼԻԹՈՆՈՒՄ ՄԵՇ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ՄԻՍՍԻՆ, ԱՄԲԱՂՁ ՎԱԳՕՆԵՐՈՎ, ԵՐԿԱՐՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒ-
ԻՐ 25 ԿՊԻ, ԻՍԿ ՓՈՔԻ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ
ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՆԵՍԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՊԵԿՈՎ:

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ

ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՈՒՄ ԳՐԱՆԵՆԵԱԿԸ

ԲԵՑ Է ԸՄԵՆ ՕՐ ԸՈՒՄՈՏԵԼՆ 9 Ժամից մինչև 2 Ժամ

կեսորից յետոյ բացի ԿԻՐԵԿԻ օրերից:

ՕԳՈՍՏՈՍ 3.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց

ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՅԱՐԱՆՈՅ		Բ.	Կ.	ՀԵՆՈՒԳԻՐ		ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ- ԹՈՒՂԻ		ՓՕՍ		ԲԺՇԿԱՆՈՑ		«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	
(Օգոստոսի 2-ին)						Բ.	Կ.						
Ոսկին (պորտուգալացի)				7	95	Կովկասի և Ան-		Ամեն տեսակ թէ նա-		Հիւանդների ընդունելու-		«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.				1500	—	դրկովկասի քա-		մակներ, թէ լրագիրներ և		թիւնը 8-ից մինչև 10 Ժամը		—	
Հին 20 4. 72 պր. 1000 »				1275	—	ղաքները		թէ ծանր փոստ ամեն տեղ		յուշերի 1-ց մինչև սեպ-		—	
Վերջինի 30/0 առաջի փո-						1		ուղարկելու, ընդունվում		տեղերի 1-ը:		—	
խառնութեան տոմ. 100 »				233	—	2		են ամեն օր, առաւօտեան		Երկու շաբթի. վերմի-		—	
Երկրորդ 50/0 վերջինի »				235	—	3		8 Ժամից մինչև 1 և կէսօրից		նեղքին հ. Բաղատ վնե-		—	
Մարտի կուրսը 267—				100	—	4		յետոյ 3 Ժամից մինչև 7:		րական և կաշու հ., Ա. Բա-		—	
Լուդովի կուրսը Օգոստոսի						2	88	Իսկ կիրակի օրերը հասա-		խուսով կանանց, երեխա-		—	
վրա.						3	75	րակ նամակներ մինչև 10		ների հեռագրական մասը		—	
								Ժամ առաւօտեան և 3—7		10-ից մինչև 11 Ժամ:		—	
								Երեկոցեան.		Երեք շաբթի. վերմի-		—	
								Ռուսաստանից և		նեղքին հ. Բաղատ վնե-		—	
								Արտաստանից և		րական և կաշու հ., Ա. Բա-		—	
								փոստատանցով թիֆ-		խուսով կանանց, երեխա-		—	
								լիսում ամեն օր: Բա-		ների հ. և մանկաբարձու-		—	
								զուրկ թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	
								թիֆլիսեան երկա-		թեան. Պէտնով աչքի հ.		—	